ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ
ՀՀ ԲԿԳԿ-Ի ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
063 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԶԱՎԵՆ ԳԱԳԻԿԻ ՍՄԲԱՏՅԱՆ

Միլա Գրիգորիի Հայրապետովայի «Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները և դրանց դերը պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հարցում» թեմայով ԺԲ.00.02- Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Միլա Գրիգորիի Հայրապետովայի «Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները և դրանց դերը պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հարցում» վերտառությամբ ատենախոսությամբ բարձրացված խնդիրներն արդիական են:

Հեղինակն աշխատանքի ներածությունում հիմնավորում է թեմայի արդիականությունը, սահմանում է ատենախոսության նպատակները, առաջադրում այդ նպատակներին հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Վերջինս սահմանում է նաև ստացվող արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, ներկայացնում է թեմային առնչվող մասնագիտական գրականությունը, ինչպես նաև ատենախոսության նորմատիվ, փորձառնական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսական աշխատանքն ունի արդիականության բարձր մակարդակ՝ ի թիվս այլնի պայմանավորված նաև այն հանգամանքով, որ զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններում մեծանում է հանրային իշխանության մարմինների կողմից միջամտությունների ծավալը, որոնք, առերևույթ, իրենցից կարող են ենթադրել իշխանական լծակներով օժտված սուբյեկտի կողմից իրեն տրված լիազորությունների չարաշահում կամ չարաշահման ռիսկ: Բացահայտելով լավագույն փորձը՝ քաղաքականությունը մշակողները կարող են նպատակաուղղված միջամտություններ իրականացնել ներգործության միջոցների արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ասվածի համատեքստում կարևոր դեր ունի սկզբունքների ոչ միայն հռչակագրային կամ զուտ օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը, այլև դրանց ինքնաշխատ կենսագործման հստակ մեխանիզմների ներդրման իրավական անհրաժեշտությունը, ինչը ոչ միայն օրենսդրի գործառույթների համատեքստում կարող է իրականացվել, այլև դոկտրինալ մակարդակում՝ միասնական ընկալումների և միասնական չափորոշիչների ներդրման համատեքստում:

Նշված նպատակներով պայմանավորված՝ ատենախոսությամբ առաջադրված նպատակներն ու խնդիրներն ունեն խիստ արդի և հրատապ կարևորություն:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակը համապատասխան վերլուծության է ենթարկում պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի զարգացման պատմական նախադրյալները, քննարկում է հանրային իշխանության դեմ արդյունավետ պաշտպանվելու միջոցների իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի նախադրյալ, ինչպես նաև քննարկում է հանրային իշխանության դեմ արդյունավետ պաշտպանության իրավունքի զարգացումը:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը ներկայացնում է վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի իրացման երաշխիքներ, սկզբունքները՝ որպես վարչարարության և վարչական վարույթի իրավական նախադրյալներ, քննարկման առարկա է դարձրել վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները սահմանադրական կարգավորումների համատեքստում, իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքը վարչական վարույթում, ինչպես նաև քննարկել է վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման որոշ հիմնախնդիրներ:

Ատենախոսության երրորդ գլխում հեղինակը վերլուծության է ենթարկում վարչարարության և վարչական վարույթի առանձին սկզբունքների հատուկ նշանակությունը պատշաճ վարչարարության ապահովման համատեքստում, քննարկում է ի պաշտոնե (Ex officio) քննության սկզբունքի և լսված լինելու իրավունքի հարաբերակցությունը, վստահության պաշտպանության սկզբունքի ապահովման հիմնախնդիրը՝ վերադասության կարգով վերանայման վարույթում, ինչպես նաև օրինականության և ի պաշտոնե քննության սկզբունքի խախտման իրավական հետևանքները:

Այդուհանդերձ, առկա են որոշակի նկատառումներ, որոնք հաշվի առնելու պարագայում, մեր գնահատմամբ, կբարձրանա աշխատանքի գիտական և գործնական արժեքը:

1. Ատենախոսության տեքստում առկա են որոշ տեխնիկական խնդիրներ: Օրինակ՝ բովանդակության բաժնում գլխատառերով գրված հատվածում օգտագործվել են փոքրատառեր, կամ որոշ հղումների սկզբնամասում բացակայում է «Տե՛ս,» ձևակերպումը: Եթե հեղինակը «Տե՛ս,» նշումը չի տեղադրել օտարալեզու հղումներից առաջ, ապա արդարացված չէ նույն տրամաբանությամբ հենց երկրորդ հղման ձևաչափը, որում «Տե՛ս,» նշումն առկա է, իսկ առաջին հղման դեպքում՝ բացակայում է (երկուսն էլ օտարալեզու են): Բացի այդ, կան տեսական աղբյուրներին հղումներ, որոնցում առկա չէ էջի նշումը, որից օգտվել է հեղինակը, իսկ գրականության ցանկում նշված չեն միջազգային փաստաթղթերի ընդունման ամսաթվերը (օրինակ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Վարչական վարույթի մասին» օրենքը, Конституция Российской Федерации-ն և այլն): Որոշ դեպքերում հեղինակը չի նշել նաև տեսական գրականության էջերի քանակը և թույլ է տվել այլ վրիպակներ, որոնց շտկումը կբարձրացնի աշխատանքի արժեքը:

2. Պաշտպանության ներկայացվող 1-ին դրույթում հեղինակը նշում է, որ վարչարարության սկզբունքները չեն կարող անտեսվել կամ ընտրողաբար օգտագործվել, քանի որ դրանց կիրառումն իրավունքի գերակայության և արդարության պահպանման անհրաժեշտ պայման է, իսկ դրանց անտեսումը կարող է հանդիսանալ վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու հիմք: Նշված դատողությունը, թեև իր էությամբ իրավաչափ է, սակայն հարկ է նկատել, որ վարչաիրավական հարաբերություններն ունեն առավել լայն ընկալում, քան վարչական վարույթն է և չեն եզրափակվում միայն վարչական ակտի ընդունմամբ: Մասնավորապես, վարչաիրավական հարաբերությունները կարող են եզրափակվել նաև նորմատիվ իրավական ակտի կամ ռեալ ակտի ընդունմամբ, ուստի հարկ է քննարկել սկզբունքների իրավական բովանդակությունը ոչ միայն վարչական ակտերի ընդունման գործընթացում, այլև ռեալ ակտերի ընդունման կամ նորմատիվ վարչարարության գործընթացում, ինչը բացակայում է աշխատանքում:

3. Պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում հեղինակը քննարկում է այն գաղափարը, ըստ որի անհրաժեշտ է իրավունքի միատեսակ մեկնաբանումն ու կիրառումն օրենսդրական մակարդակում ամրագրել որպես սկզբունք, իսկ դրա խախտումը՝ որպես վարչական ակտի բեկանման կամ փոփոխման հիմք: Սակայն հեղինակը չի բացահայտում այդ սկզբունքի հասկացությունը, մասնավորապես՝ թե, ըստ հեղինակի, ինչ բովանդակություն պետք է ունենա տվյալ սկզբունքը: Բացի այդ, հարկ է դրույթի պաշտպանության ժամանակ լրացուցիչ հիմնավորել, թե ի վերջո տվյալ սկզբունքի ներդրումն ինչ ձևով և ինչ չափով կհակասի վարչական մարմինների հայեցողական լիազորությունների իրացման իրավական հնարավորությանը, և արդյոք չի հանգեցնի կարծր իրավունքի ձևավորմանը, որը չի զարգանում՝ ի թիվս այլնի, նաև տարբեր մեկնաբանությունների շնորհիվ: Միաժամանակ, կարծում եմ, որ նպատակահարմար է տվյալ սկզբունքը դիտարկել նաև կամայականության արգելքի սկզբունքի համատեքստում, քանի որ վերջինս պահանջում է, որ վարչական մարմինները միատեսակ փաստական հանգամանքների առկայության դեպքում ցուցաբերեն հավասար մոտեցում և չկիրառեն տարբերակված վերաբերմունք, եթե դրա համար բացակայում է օբյեկտիվ և իրավաչափ հիմնավորումը:

4. Պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթում հեղինակը նշում է, որ պոզիտիվ ֆիկցիայի կիրառումն ուղղված է վարչական կարգով բողոքարկման ինստիտուտի արդյունավետության բարձրացմանը և բողոքների քննության գործընթացի էական բարելավմանը, արդյունքում նաև՝ դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը: Հեղինակը նշել է նաև դրա կիրառման սահմանափակումների և առանձնահատկությունների վերաբերյալ իրավակարգավորումների սահմանման անհրաժեշտությունը: Սակայն կարծում եմ, որ այս դրույթի էությունն առավել բնորոշ է եզրահանգման իրավական բովանդակությանը, այլ ոչ պաշտպանության ներկայացվող դրույթի իրավական բովանդակությանը, քանի որ այն իր էությամբ ենթադրում է եզրահանգում որևէ մտքի առնչությամբ, այլ ոչ թե պաշտպանության դրույթ: Ուստի, եթե հեղինակը տվյալ դատողությունը ներկայացնում է որպես պաշտպանության դրույթ, ապա պաշտպանության գործընթացում անհրաժեշտ է լրացուցիչ հիմնավորել դրա՝ որպես պաշտպանության ներկայացվող դրույթի իրավական էությունը՝ այն եզրահանգումից տարբերակելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է քննարկել և ընդգծել նաև այն իրավակարգավորումները, որոնք

ըստ հեղինակի անհրաժեշտ են, սակայն առկա չեն գործող իրավական համակարգում, և որոնք հեղինակն առաջարկում է ներդնել:

Չնայած վերը նշվածին կարծում եմ, որ՝

1. Միլա Գրիգորիի Հայրապետովայի «Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները և դրանց դերը պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հարցում» թեմայով ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» թեկնածուի ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:

2. Ատենախոսության հեղինակ Միլա Գրիգորիի Հայրապետովային կարող է շնորհվել ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս,
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
իրավաբանական վարչության վարչական
իրավախախտումների վերաբերյալ
գործերի քննության բաժնի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու Զավեն Սմբատյան

Զավեն Սմբատյանի ստորագրությունը հաստատում եմ.
Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի մարդկային ռեսուրսների
կառավարման վարչության պետ Լուսինե Սարգսյան